Հավելված N 3
ՀՀ կառավարության 2025 թվականի
օգոստոսի 28-ի N 1217-Լ որոշման

Կ Ա Ր Գ

2025 ԹՎԱԿԱՆԻ ԼՈԼԻԿԻ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԹԵՐՎՈՂ ԼՈԼԻԿԻ ՔԱՆԱԿՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. 2025 թվականի լոլիկի մթերումների գործընթացի կազմակերպման միջոցառման շրջանակներում մթերվող լոլիկի քանակների փաստաթղթավորման և տեղեկատվության տրամադրման կարգի (այսուհետ՝ կարգ) գործողությունը տարածվում է միջոցառման շրջանակներում լոլիկի մթերումներ իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ տնտեսավարող սուբյեկտ) վրա:

2. Կարգով հաստատվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից տոմատի մածուկի արտադրության նպատակով գնված լոլիկի քանակների փաստաթղթավորման և նախարարությանն ու մարզպետների աշխատակազմերին (այսուհետ՝ լիազոր մարմիններ) ներկայացվող տեղեկատվության ձևը, ներկայացման ժամկետները և լրացման կարգը:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Լիազոր մարմիններին տեղեկատվության տրամադրման նպատակով տնտեսավարող սուբյեկտների կողմից մթերվող լոլիկի քանակների փաստաթղթավորումն իրականացվում է կարգի ձևին համապատասխան:

3. Տնտեսավարող սուբյեկտների տոմատի մածուկի արտադրության նպատակով լոլիկի գնման ժամանակաշրջանում ամենօրյա պարբերականությամբ լիազոր մարմինների secretariat@mineconomy.am, ararat.gyugh@mta.gov.am կամ armavir.gyugh@mta.gov.am էլեկտրոնային փոստերի հասցեներին են ներկայացնում իրենց կողմից գնված լոլիկի քանակների վերաբերյալ Excel ծրագրով լրացված և տնտեսավարող սուբյեկտի լիազոր անձի կողմից ստորագրված կամ կնքված տարբերակով տեղեկատվությունը՝ կարգի ձևին համապատասխան:

4. Կարգի ձևի տեղեկատվությունը ներկայացվում է լոլիկի գնում կատարած յուրաքանչյուր օրվա համար՝ մինչև հաջորդող օրվա ժամը 18^{00}-ն:

5. Լիազոր մարմիններն ապահովում են կարգի ձևի տեղեկատվությունում ներառված՝ առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվության գաղտնիությունը:

3. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Կարգի ձևի տեղեկատվությունում ներառվող լոլիկը հանձնողի, լոլիկի ցանքի տեղակայման վայրի և գնված լոլիկի վերաբերյալ տվյալները պետք է համապատասխանեն լոլիկ հանձնողների և տնտեսավարող սուբյեկտների միջև կնքված պայմանագրերում ներառված տվյալներին:

6. Կարգի ձևի տեղեկատվությունը լրացվում և ներկայացվում է հայերենով՝ Sylfaen տառատեսակով:

7. Թվային ցուցանիշները լրացվում են թվի տասներորդական մասի ճշտությամբ:

8. Լոլիկի ցանքի տեղակայման վայրի, լոլիկ հանձնողի և լոլիկի վերաբերյալ տվյալները լրացվում են այնպիսի մանրամասնությամբ, որ ապահովվի դրանց ճշգրիտ նույնականացումը:

Ձև

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

_____

(Տնտեսավարող սուբյեկտի անվանումը և մթերման կետը)

կողմից տոմատի մածուկի արտադրության նպատակով գնված լոլիկի քանակների մասին

Ամսաթիվը (օր, ամիս,տարի, XX.XX.2025)	Շահառուի անվանումը կամ անունը, ազգանունը	Շահառուի ՀՎՀՀ-ն կամ անձնագրի սերիան կամ ն/ք համարը	Շահառուի հեռախոսահամարը XXXXXXXX)	Լոլիկի գնման պայմանագրի համարը	Լոլիկի ցանքի տեղակայման մարզը	Լոլիկի ցանքի տեղակայման բնակավայրը	Լոլիկի ցանքի չափը՝ ըստ պայմանագրի (հա)	Հանձնած լոլիկի քանակը (կգ)	Մթերման (գնման) 1 կգ-ի գինը (դրամ)
1	2	3	4	5	6	7	8	9	10

Ստորագրող

....

(պաշտոնը) (անունը, ազգանունը)

.....

(ստորագրությունը)

.... 2025 թ.

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28.08.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ